ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (18.01.2021թ.-17.06.2021թ.)

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի վեցերորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2021 թվականի հունվարի 18-ին և ավարտվել հունիսի 17-ին: Գումարվել է 7 հերթական, 10 արտահերթ և 2 հատուկ նիստ:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովն ընդունել է 307 օրենք, որից՝

- 10-ը «մայր» օրենքներ են:
- 282՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,
- 15՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 241-ի հեղինակը Կառավարությունն է, 43-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները, 16-ինը՝ խմբակցությունները, իսկ 7-ինը՝ Կառավարությունը և Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 20-ինը գլխադասային է համարվել Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 26-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի

մշտական հանձնաժողովը, 11-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 129-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 4-ինը՝ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 18-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 87-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը, 9-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- ընտրել է Վճռաբեկ դատարանի նախագահ
- ընտրել է Վճռաբեկ դատարանի դատավորի մեկ թեկնածու,
- ընտրել է Բարձրագույն դատական խորհրդի երկու անդամ,
- ընտրել է Հաշվեքննիչ պալատի մեկ անդամ,
- նշանակել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մեկ անդամ
- նշանակել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մեկ անդամ:
- ընդունել է «Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող ռազմագերիների եվ գերեվարված քաղաքացիական անձանց, այդ թվում՝ կանանց հայրենադարձումը խոչընդոտելու եվ անհարկի ձգձգելու ադրբեջանի քաղաքականությունը դատապարտելու վերաբերյալ» և «Սահմանամերձ գոտիներում, մասնավորապես՝ Սյունիքում,Գեղարքունի

քում եւ Վայոց ձորում ստեղծված ճգնաժամային իրավիճակի, առկա խնդիրների եւ դրանց լուծման ուղիների, սահմանների պաշտպանության եւ անվտանգության ապահովմանն ուղղված հարցերի վերաբերյալ» հայտարարությունները:

- ի գիտություն է ընդունել՝

- «Հայաստանի Հանրապետության դատախազության 2020 թվականի գործունեության մասին» հաղորդումը,
- «Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի գործունեության մասին» տարեկան հաղորդումը,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը,
- «2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում եւ «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի գործունեության վերաբերյալ» տարեկան զեկույցը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 242-Ա որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2020 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին» զեկույցը,

- Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված եւ նրանց կողմից ընդունված ֆինանսական եւ այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը եւ արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների վերաբերյալ զեկույցը,
- Արարատի եւ Արմավիրի մարզերում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների եւ ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեության արդյունավետությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների վերաբերյալ զեկույցը,
- 2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցը: